Հաստատված է՝
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2025 թվականի
ապրիլի 28-ի
№ 1-04/25/6 որոշմամբ

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

ՇՏՀ ՄՄԿԾ հետազոտական գործունեության ոլորտների որոշումը և պլանավորումը 2025-2029թթ. համար

1. 2025-2029թթ. համար Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ՄՄԿ (այսուհետ՝ Քոլեջ) հետազոտությունների գերակա ոլորտներ սահմանել.
   1.1. կենսատեխնոլոգիա
   1.2. հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
   1.3. քաղաքաշինություն, ճարտարապետություն, դիզայն
   1.4. ինժեներական էկոնոմիկա և կառավարում
   1.5. տեղեկատվական տեխնոլոգիաներ և կապ
2. 2025-2029թթ. համար ՇՏՀ Քոլեջի հետազոտությունների գերակա ոլորտների համար պլանավորել կատարելու հետևյալ աշխատանքները.

կենսատեխնոլոգիա.

- Հավաքել և լաբորատոր պայմաններում ստանալ տարբեր բույսերի պտղայուղեր, կորիզայուղեր և սերմնայուղեր:

հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն.

- Կատարել ՀՀ տարբեր գոտիների հողերի փորձանմուշների հավաքագրում և լաբորատոր փորձաքննության արդյունքների հիման վրա տվյալների ամփոփում: Բացահայտել տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերի վրա օդի ջերմաստիճանի ազդեցությունը և փորձարկվող յուրաքանչյուր մշակաբույսի համար որոշել ցրտահարության ջերմաստիճանը: Որոշել հողի դաշտային խոնավունակությունը և դրա բարձրացման վրա տարբեր մելիորատիվ նյութերի և պարարտանյութերի ազդեցությունը: Հետազոտել փորձարկվող մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների տարածվածությունը և դրանց դեմ պայքարի տեղեկատվական թերթիկներ մշակել:

քաղաքաշինություն և ճարտարապետություն, դիզայն

- Ուսումնասիրել Արցախի պատմա-ճարտարապետական ժառանգությունը, զարգացման փուլերը, շինարարական տեխնիկան և արվեստը, գտնել նրանց տեղը հայկական ճարտարապետության մեջ, ավանդական ինժեներական լուծումները եւ հնարքները, որոնց ժամանակակից կիրառությունը կնպաստի արդի պայմաններում զարգացնելու «Կանաչ և կայուն» քաղաքաշինություն՝ էներգախնայող ծավալատարածական լուծումներով :
- Ուսումնասիրել, հետազոտել դաշտային դիտարկումների արդյունքների հիման վրա Հայաստանի գեոմորֆոլոգիան, կազմել քարտեզներ, որի արդյունքները իրենց կիրառությունը կգտնեն տնտեսության և քաղաքաշինության ոլորտներում լուրջ վնաս պատճառող երևույթների և պրոցեսների ուսումնասիրության հարցերում:
- Ուսումնասիրել և փնտրել նախագծային մտքեր և ստեղծել ավարտուն էսքիզներ:

ինժեներական էկոնոմիկա և կառավարում.

- Մասնակցել պարենային անվտանգության ապահովման ուղիների մշակմանը (երկարաժամկետ ծրագրի մաս).

տեղեկատվական տեխնոլոգիաներ և կապ.

- Ուսումնասիրել, հետազոտել անօդաչու թռչող սարքերի կառուցվածքը, կառավարումը և տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործել դրանց աշխատանքի բարելավման, գյուղատնտեսության մեջ պարարտանյութերի և բույսերի պաշտպանության միջոցների օգտագործման համար այդ սարքերի կիրառման նպատակով (միջնաժամկետ ծրագրի մաս):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ն.Ա.Միքայելյան**

Գիտական քարտուղար ժ/պ՝ **Լ.Գ.Այդինյան**